

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

(Հատուած "Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական Արուեստը" անտիպ
ուսումնասիրութիւնից)

«Լինելութիւն է սկիզբն ապականութեան, եւ ապականութիւն
դարձեալ անդրէն է սկիզբն լինելութեան»:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Ա. Հայաստանի հասարակական-քաղաքական դրութիւնը
եւ մշակոյթը 10-րդ դարում

Հայ ժողովրդի պատմութեան մէջ 10-րդ դարը գրաւում է առանձնակի տեղ: Դա բացառիկ բարենպաստ ժամանակաշրջան էր ինչպէս երկրի հասարակական-քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնների, այնպէս էլ գրական-մշակութային կեանքի ասպարեզում: Հայաստանը թեւակոխել էր զարգացման նոր փուլ: Ընդհանուր վերելքն սկսուել էր 9-րդ դարի երկրորդ կեսից եւ շարունակուեց մինչեւ 14-րդ դարի առաջին կեսը: Արդի հայ պատմագիտութեան պարբերացմամբ՝ դա Հայաստանի զարգացած աւտատիրութեան շրջանն է:(1)

Վերելքի սկիզբը կապուած էր պատմա-քաղաքական մի խոշոր իրադարձութեան հետ: Թօքափելով արարական տիրապետութեան լուծը՝ հայ ժողովուրդը վերականգնեց իր պետական անկախութիւնը: 885 թ. Բագրատունիների ազդեցիկ տոհմը ստեղծեց Հայոց թագաւորութիւնը, որը գոյատեւեց մինչեւ 11-րդ դարի կեսը: Բագրատունիների հեռամետ պայքարը՝ ստեղծել համահայկական կենտրոնացուած ուժեղ պետութիւն, դժբախտարար, չպակուեց յաջողութեամբ:

digitised by A.R.A.R. @

Աւելի ուժեղ գտնուեցին միջիշխանական հակամարտութիւնները: 908 թ. Արծրունիները ստեղծեցին Վասպուրականի թագաւորութիւնը, որը Բագրատունիների թագաւորութեանը գուգահեռ՝ պահպանուց աւելի բան մէկ հարիւրամեակ:

Նոյն 10-րդ դարում առաջացան Կարսի, Սիւնիքի, Տաշիր-Զորագետի մանր թագաւորութիւնները, որոնք էլ աւելի խորացրին երկրի քաղաքական մասնատուածութիւնը: Դա դուռ էր բացու վերելք տաք էր, եւ երկիրը չէր նախազգում գալիք վտանգը: Հայաստանը բարգաւաճում էր տնտեսապէս: Եւ որքան էլ ժամանակի պատմագիր Յովհաննէս Դրասխանակերտցին բանաստեղծորէն գծած լինի Հայաստանի համայնապատկերը, այն նշմարտացի է ընդհանուր առմամբ: «Էսկ աշխարհին Հայաստանեայց, - գրում է նա - յաւուսն յայնոսիկ այց արարեալ տեան եւ պատսպարեալ եւ յաջողեալ ի բարութիւնս, ընակեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իւրեանց. եւ սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս եւ արմատացուցին քիւրաստանս ծիրենեաց եւ պարտիզաց.

հերկեցին հերկս արտաքոյ փշոց եւ կրեցին պառուզ հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնաց. լցան գորոք գինույ ի կուրս այգեստանեայց, եւ իրինք ցնծութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արտօտականք անդեայք արջառոց եւ հոտք ոչխարաց: Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք եւ հանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարդ հաստակեղոյս ձուլեալ կրով՝ ի մենաստան եւ յաւան եւ յագարակս»(2):

Հայաստանի տնտեսական բարգաւաճմանը մեծապէս նպաստում էր տարանցիկ առեւտուրը: Քաղաքներում ծաղկում էր արհեստագործութիւնը: Նրա արտադրանքը լաւ վարկ ու պահանջարկ ուներ միջազգային ապրանքաշրջանառութեան մէջ: Կուտակում եւ ուռնանում էր վաշխառուական դրամագլուխը: Բարենպաստ էր նաև միջազգային դրութիւնը: Բիւզանդիան զգալիօրէն բուլացել էր արաբների դէմ մղած պատերազմներից: Արարական խալիֆարն է իր հերթին կորցրել էր երեխնի հզօրութիւնը: Խաղաղութիւնը հնարաւորութիւն էր ընծեռել հայ ժողովրդին բռնելու վերելիքի ուղին: Ըստ Հ. Մանանդեանի՝ 10-րդ դարի Հայաստանի քաղաքներն աւելի բազմամարդ էին, քան նոյն դարի եւրոպական քաղաքները (3): Մ. Արեգեանի հակիրճ բնորոշմամբ՝ «Դա մեր Փեղողակզմի ամենաբրերախոտ շրջանն է»(4):

Տնտեսական բարգաւաճման հիման վրայ վերելք է ապրում հայ մշակոյթը: Զարրօնքն ամենից առաջ դրսեւորուց նարտարապետութեան մէջ: Հայկական նարտարապետութիւնը, որի զարգացման ընթացքն ընդհատուել էր արարական տիրապետութեան տարին ներին, վերադարձաւ իր նախահիմքերին, երկնելով նոր յդացումներ՝ ոճակառուցողական

նոր յատկանիշներով: Վանականութիւնը յարգի էր, եւ ամենուր կառուցւում են համալիրներ, եկեղեցիներ, տաճարներ, կրթա-մշակութային կենտրոններ: Դարի Եշանաւոր կառոյցներից էին Սանահինի եւ Հաղպատի վանքերը՝ Գուգարքում. Աղքամարի Ս. Խաչ տաճարը՝ կառուցւուած 915-921 թթ. որի նարտարապետն էր Մանուկը՝ «այր լի իմաստութեամբ եւ գօրաւոր ի գործս իւր»(5), ինչպէս վկայում է ժամանակակից պատմագիրը: Անիի Մայր տաճարը՝ աւարտուած 1001թ., որի նարտարապետն էր մեծահամրաւ Տրդատը. Արգինայի տաճարը, ուր փոխադրուեց կաթողիկոսարանը. Կարսի տաճարը, եւ այլն:

Նշանաւոր այդ կառոյցներից էր նաև Նարեկավանքը, որը գտնուում էր Վասպուրականում, Վանայ ինի հարաւային ափին: Վանի կառուցման ստոյգ թուականը յայտնի չէ: Ենթադրուում է, որ կառուցուել է Անանիա Մոկացի կաթողիկոսի /941-965/ գահակալութեան առաջին տարիներին, ինչպէս կարելի է մակարերել Ստեփանոս Տարօնեցւոյ վկայութիւնից. «յայս ժամանակիս շինեցաւ նարեկ ի Շշոռունեաց գաւառին»(6): Վանի հիմնադիրը եւ առաջնորդը եղել է ականաւոր փիլիսոփայ, քանաստեղծ եւ մանկավարժ Անանիա Նարեկացին:

Գիտութեան եւ արուեստի մենաշնորհը գտնուում էր հոգեւորականութեան ձեռքին: Ահա թէ ինչու դարի առաջադիմութիւնը ժամանակի պատմագիր Ստեփանոս Տարօնեցին ամենից առաջ տեսնում է վանականութեան եւ վանքերի բազմացման մէջ: «Յայս ժամանակի, գրում է նա-ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց»(7): Դարի գիտուն եւ հոչակաւոր եկեղեցականների թիւը փոքր չէր, եւ Տարօնեցին անուն առ անուն

յիշատակում է ոմանց՝ ժատ, բայց միշտ դրական թնութագրմամբ: Դարի այդ նշանաւոր մարդկանցից էին նաև Խոսրով Անձեւացին և Անանիա Նարեկացին: Առաջինը Գրիգոր Նարեկացու հայրն էր, յայտնի մատենագիր եւ բարձրաստիճան հոգեւորական, երկրորդը՝ Գրիգոր Նարեկացու ուսուցիչն էր, որին Տարօնեցին անուանում է «փիլիսոփայն մեծ»(8), Ուխտանեսը՝ «տիեզերական վարդապետ» եւ «հոչակաւոր հոեսոր»(9), Գրիգոր Նարեկացին՝ «հոգեզարդ եւ մտավարժ փիլիսոփայ»(10):

10-րդ դարում գրականութիւնը հասաւ բարձր մակարդակի: Թէեւ նոր մտքերն ու զգացումները երեւան էին գալիս դեռևս միջնադարեան գաղափարախօսութեան հիմքի վրայ եւ նրա կրօնա-աստուածաբանական հենքին միահիւսուած, սակայն մի կողմից խորանում էր գրականութեան աշխարհականացման, միւս կողմից՝ նրա հոգեբանական նշմարտացիութեան ձգուումը: Վերացականութիւնն աստիճանաբար ընկրում էր կենդանի զգացմունքների առաջ: Գրականութիւնը ստեղծագործական լիցք եւ աւիշ էր վերցնում ժողովրդական բանահիւսութիւնից: Ազատագրութեան համար մղած իր դարաւոր պայքարի ոգին հայ ժողովուրդը մարմնաւորեց «Սասնայ ծուեր» դիւցազներգութեան մէջ: Նրա շունչը տեւաբար թեւածել է 10րդ դարի հոգեւոր մքնոլորտի, կեանքի ու կենցադի վրայ: Գրականութիւնը հարստանում է նոր ժանրերով, ընդլայնում է գրական կապերի ոլորտը: Դարի բանաստեղծական արտադրանքի բարձրակայտը Նարեկացը գրականութիւնը 10րդ դարում սերտանում է միստիցիզմի հետ, ստեղծագործական լիցքեր ստանալով Դիոնիսիոս Արենպագացու՝ երկնային նուիրապետութեան եւ աստծու՝ իբրև յաւիտեական անփոփոխ լոյսի արտահեղման մասին:

Պատմագրութիւնը, որ գրեթէ մարել

էր արարական տիրապետութեան դարերին, 10րդ դարում տուեց ականաւոր դեմքեր՝ Յովիաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Տարօնեցի /Աստղիկ/, Ուխտանես եւ ուրիշներ: Եղի են գործեր, որոնք, դժբախտաբար, չեն հասել մեզ: Պատմագրութիւնը բացայայտ յենում եւ ստեղծագործաբար շարունակում էր Տրդ դարի աւանդութիւնները: Մի կողմից հետեւում էին Մովսէս Խորենացու՝ ստուգութեան ձգուող քննական սկզբունքներին, միւս կողմից՝ Ախանապատութիւն էին տալիս Փաւստոս Բուզանդի աւանդոյթին՝ ժողովրդական զրոյցների, վէպերի եւ ասէերի վերաբարութեանը: Ուրուագծուում է նաև ժամանակագրութեան ժանրը, որն ուրոյն գծերով հարստացնում է պատմագրութիւնը: Պատմագրութեան մէջ լայն արձագանք է գտնում ազգային կեանքի վերելքի փառարանութիւնը, կենտրոնական ուժեղ բազաւորութեան ստեղծման գաղափարը, կենտրոնախոյս ձգուումների եւ միջիշխանական գժուութիւնների քննադատութիւնը: Պատմագիրները բողել են պատմական արձակի ընտիր էշեր, որոնք վկայում են գրողի, նրանց վառ տաղանդի եւ վարպետութեան մասին:

Զարթօնքը զգալի էր նաև փիլիսոփայութեան բնագաւառում: Կար երկու հոսանք: Մէկը՝ նոր պլոտականութեան այն ուղղութիւնն էր, որ շիր առ շիր աւիշ էր տալիս 5-6րդ դարերի հայ փիլիսոփայական մտքին, միւս թեւը յարում էր ուացիոնալեզմին: Նոր պլատոնականութիւնը 10րդ դարում սերտանում է միստիցիզմի հետ, ստեղծագործական լիցքեր ստանալով Դիոնիսիոս Արենպագացու՝ երկնային նուիրապետութեան եւ աստծու՝ իբրև յաւիտեական անփոփոխ լոյսի արտահեղման մասին:

աստուածաբանական ուսմունքից: Թէ Ամանիա Նարեկացին եւ թէ Գրիգոր Նարեկացին յարում էին նոր պլատոնականութեան այս թերին: Զարգացման հեռանկարը, սակայն, կապուած էր բնափիլիսոփայութեան ուղղութեան հետ, որ հանդէս եկաւ փոքրինչ աւելի ուշ:

Դարի մշակութային կեանքին համընթաց էր արուեստը: Քանդագործութիւնը եւս, ի տարրերութիւն գրեթէ անմարմին վերացարկման, որոշակի տեղ է տալիս մարդկային հոգերանութեանը: Կերպարները բացայացտում են մարդկային նակատագրերի իմաստաւորման տեսանկիւնից: Թէեւ մարդու հայեացքն ուղրուած է երկնքին, բայց նրա դէմքին զգալի է երկրային տառապանքը: Անհատակութիւնն ուղի է բացում հոգեկան ապրումների դրսեւորման մէջ: Սա գեղագիտական այն պահանջն էր, որ յատուկ էր դարի արուեստին: Այսպէս էր նաև որ մնանկարչութեան մէջ: Գեղագիտական այդ պահանջն էլ մղում էր հասնելու դիմանկարային Ամանութեան վերարտադրմանը: Թովմա Արծրունու հաւաստմամբ՝ Աղքամարի պատկերագույնակներից Գագիկ Արծրունու պատկերագույնակը նման է բնորդին՝ Գագիկ թագաւորին:(11):

Քանդակործութեան միւս նորութիւնը թեմատիկ բազմազանութիւնն էր: Աւելի նուրբ ձեւեր են ընդունում բուսական զարդաքանդակները, մեծ տեղ են տալիս սիւժետային, հիմնականում աստուածաշնչական, պատկերաշարին: Աշխարհիկ տարրերն ասահնանարար բափանցում են կրօնական թեմաների մէջ: Աղքամարի տաճարի բանդակների մէջ, յատկապէս որբատունկի գոտում, Արքարփի Տէր-Ներսէսեանի դիտարկման համաձայն,

արդէն «տեղտեղ աշխարհիկ տարրերը միահիւսում են կրօնական տեսարաններին»(12):

Մանրանկարչութեան մէջ եւս ձեւարորուեցին երկու հիմնական ուղղութիւններ՝ գծանկարչական եւ գեղանկարչական: Գծանկարչական ուղղութիւնը յենում էր ժողովրդական աւանդոյթների վրայ, գեղանկարչականը, որ կոչուած էր բաւարարելու հոգեւոր եւ աշխարհիկ տէրերի գեղարուեստական պահանջմունքներն ու նաշակը, գծուում էր վառ գոյների եւ նրբագեղ ձեւերի օգտագործմամբ հասնել հոգերանական շացնող ներգործութեան: Թէեւ 10րդ դարից պատկերագրդ ֆիչ մատեաններ են հասել մեզ, բայց ակներեւ է ծաղկողների գեղագիտական եւ ննական սկզբունքների տարրերութիւնը: Նշանաւոր յուշարձաններից է Էջմիածնի Աւտուարանը /ՄՄ, ձեռ. նո. 2374/՝ պատկերագարդուած 989թ., որը դասում է այդ արուեստի համաշխարհային գլուխգործոցների շարքը:

Այսպիսով, 10րդ դարի տնտեսական եւ քաղաքական ընդհանուր վերելքը պայմաններ ստեղծեց արուեստի, գրականութեան եւ գիտութեան զարգացման համար: Կեանքը ծնում էր հետաքրքրութիւնների նոր ոլորտներ: Փոխում էին մարդկանց հայացքներն ու պատկերացումները, բախում էին հին ու նոր գաղափարները, ուրուագծում էին տարրեր նաշակները: Մի կողմից աշխարհիկ հանոյքների ծարաւ՝ միահիւսուած երկրայինին փարուելու մարդկային ցանկութիւնների հետ, միւս կողմից՝ երկնայինին փարուելու կրօնամիստիկական գծուում՝ միահիւսուած անապատ քաշուելու, ճգնելու, ներհայցութեամբ բարոյապէս մաքրուելու եւ հոգու փրկութեան հասնելու քրիստոնէական հաւատի հետ: Մի կողմից գոյութիւն ունեցող կարգերի կայունացման

շանք ու եռանդ, միւս կողմից՝ այդ կարգերի բարեփոխման նիգ ու պայքար։ Եւ ինչպէս միշտ՝ հակասութիւնների միասնութիւն եւ հակադրութիւնների պայքար, առանց որոնց չկայ շարժում եւ զարգացում։ Գրականութիւնը, ինչպէս միշտ, կոչուած էր արձագանքելու իրականութեան մէջ տեղի ունեցող այդ տեղաշարժերին։

(Մարունակելի)

ԱՐԴԱԼՈՅՍ ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՐԲԻՒՐՆԵՐ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԱԽԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՒ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. Հայաստանի հասարակական-քաղաքական դրութիւնը եւ մշակոյքը 10-րդ դարում

1. Տես' Հայ ժողովրդի պատմութիւն, Հ. 3, Հայաստանը զարգացած ֆեռալիզմի դարաշրջանում / 9-րդ դ. կեսերից մինչև 14-րդ դ. կեսերը /, Երեւան, 1976, էջ 7 եւ համեմ. Տես նաեւ՝ 1. Բարյան, Հայաստանի ֆեռալիզմի դարաշրջանի պատմութեան ուսումնասիրութիւնը սովորակայ պատմագիտութեան մէջ, Երեւան, էջ 189 եւ համեմ.։

2. Յովհաննու կարողիկոսի Դրասիանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 198-199։

3. Տես' Հ. Մանանեան, Հայաստանի քաղաքները 10-11րդ դարերում, Երեւան, 1940, էջ 5-10։

4. Մ. Արենիս, Երևան, Հ. Գ., Երեւան, 1968, էջ 563։

5. Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց տան, թնագիրը հրատարակութեան պատրաստեց, աշխարհարար բարգմ. եւ ծանօթագրեց Վ. Մ. Վարդանեան, Երեւան, 1985, էջ 460։

6. Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերուր, 1885, էջ 174։

7. Նոյն տեղում, էջ 173։

8. Նոյն տեղում, էջ 178։

9. Ուխտանս եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 8 եւ 15։

10. Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 463։

11. Ս. Տէր-Ներսէսեան, Հայ արուեստը միջնադարում, Երեւան, 1975, էջ 91։

12. Տես' Լ. Ա. Դուռնովո, Հայկական մամրամկարչութիւն, Երեւան, 1967, էջ 201։

մեծ
բեկ

ԸՆԴ-ՔԱՌ անառածանին
վերծոր հնին ի զօրաց հրեշտամարց
աղդ մարդկան կենդամնեաց մնաց,
ցուցանեմք։ Ըզքեզ բնակ հրեցին
անառածանին լիմանալի զարցին
բայց երանեալ, աղդ մարդկան լիմին
ունի եմմանուէլի, մարդկարեցին յան
ռանց գուշակեալ, աղդ մարդկան

մեծ

ՄԱՅՐ լուսոյն մարդիամ մահար
նացեալ, օրհնեալդ ի կանայտ Զըրյան
անըստուելը յարգանդի կրեցին,
օրհ։ Մի գաղարի վասըն մեր բար
բեխօսել, օրհ։

Ա ՍՍՈՒԱԾԱՌԻՆ երինային
գուռն անառածանին ձայնին ա.
ւետարաննելը հրեշտամկն. ուրախ
լեր բերկիրեալդ տեր ընդ քով
ի քերպիւելու բաղմեալ ընդ հօր ա.
հանգականաքար բնամկին համեցան
ի քում յորուլսյնի. ուրախ. Որ բա
ցեղն սրուլեալիւք շրջանվակեալ
պահիւր. այսուր ի մեջ մարդկան ի
գիրկը հովեղնին յայտնեալ. ուրախ
Զանձանելի լու։ Զանհան տնօրին

Զբուժորից փըրկու. 36։
Ուրախ լեր. Ըզքեզ լուսոյ մայր
Մայր սուրբ. 41։